ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

ԺԱՄԱՆՈՒՄ

Հուլիսի 1-ին, տեղական ժամանակով ժամը 15.00-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ն, ուղեկցությամբ «Էջմիածին» ամսագրի խմբագիր Բագրատ աբեղ. Գալստյանի, Վիեննայից ժամանեց Մոսկվա: Օդանավակայանի նախագահական սպասասրահում Հայոց Հայրապետին դիմավորելու էր եկել Մոսկվայի և Համայն Ռուսիո Ալեքսիյ Բ Պատրիարքը՝ Ռուս Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներով, Ռուսաստանի Դաշնության մշակույթի փոխնախարար Միխայիլ Շվիդկոյը, Կրեմլի արգելոց - թանգարանի տնօրեն Իրինա Ռոդիմցևան: Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց Առաջնորդ Տիրան արք. Կյուրեղյանը գլխավորում էր դիմավորող հայոց պատվիրակությունը, որի թվում էին թեմական խորհրդի նախագահ Վարդգես Արծրունին, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար Արմեն Սմբատյանը, Հայաստանի կրոնից գործոց կոմիտեի նախագահ Լևպար Սուքյանը, Հայաստանում քրիստոնեության պետական կրոն ընդունման 1700-ամյակի տոնակատարությունների կենտրոնական գրասենյակի վարիչ-տնօրեն Մեսրոպ արք. Աշճյանը, ՀՀ դեսպանության դեսպանորդ և լիազոր նախարար Ռուբեն Ակիկբեկյանը և դեսպանատան բոլոր աշխատակիցները, տեղական մամուլի և լրատվության բազմաթիվ ներկայացուցիչներ:

Սպասասրահում երկու Վեհապետների հետ տեղի ունեցավ փոքրիկ հարցազրույց, որին հաջորդեց, ի պատիվ Հայոց Հայրապետի, Ռուսաց Պատրիարքի կողմից կազմակերպված հյուրասիրությունը:

Ապա բավականին բազմամարդ և պատկառելի շարասյուն-թափորն ուղղվեց դեպի Ս. Դանիլովյան տաճարի հյուրատուն:

ՀՈՒԼԻՍ 2, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

«ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՆՁԵՐԸ» ՅՈՒՅՑԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՑՈՒՄԸ

Հուլիս 2-ի կեսօրից հետո, ժամը 13.30-ին, Կրեմլի Պատրիարքական առանձնատանը Հայոց Հայրապետը հանդիպեց Համայն Ռուսիո Ալեքսիյ Բ Պատրիարքին: Պատրիարքարանում կազմակերպված ջերմ ընդունելությունց և հյուրասիրությունից հետո, երկու Հովվապետերի գլխավորած պատվիրակությունները շարժվեցին դեպի Ուսպենսկայա կանգակատուն-թանգարան, ուր տեղի ունեցավ մամլո ասուլիս: Մամլո ասուլիսին, բացի երկու Եկեղեցիների հոգևոր առաջնորդներից, մասնակցում էին Ռուսաստանի Դաշնության մշակույթի փոխնախարար Միխայիլ Շվիդկոյը և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար Արմեն Սմբատյանը: Ասուլիսը, որին մասնակցում էին կանգվածային լրատվության միջոցների ավելի քան 100 ներկայացուցիչներ, վարում էր Կրեմլի թանգարանի տնօրեն Իրինա Ռոդիմցևան:

Վերջինիս ողջույնի խոսքից հետո, բազմաբնույթ հարցեր ուղղվեցին երկու հովվապետներին, որին հաջորդեց բացման արարողությունը: Նախ ողջույնի և ընդհանուր ներածական խոսքով հանդես եկավ Մոսկվայի և Համայն Ռուսիո Ալեքսիյ Բ Պատրիարքը.

«Ձերդ Սրբություն՝ սիրեցյալ եղբայր ի Քրիստոս Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Գարեգին Ա, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար մեծարգո տիար Արմեն Սմբատյան, Ռուսաստանի Դաշնության մշակույթի փոխնախարար մեծարգո տիար Միխայիլ Շվիդկոյ, գերաշնորհ և հոգեշնորհ հայրեր, թանկագին քույրեր և եղբայրներ.

Սրտագին ողջունում եմ ձեզ այսօր, որ Մոսկվայի հիմնադրության 850-րդ տարում հավաքվել եք այստեղ՝ Ռուսիայի սրտում, Մոսկովյան Կրեմլի սրբությունների կողքին՝ նշելու հայկական քրիստոնեական մշակույթի մեծ հոբելյանը:

Այս երկու հոբելյանները գնահատելով որպես հայ և ռուս ժողովուրդների հոգևոր մտերմության նշանակալից խորհրդանիշ, մենք բացում ենք Սուրբ Էջմիածնի գանձերի ցուցահանդեսը՝ նվիրված Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակին:

Քրիստոսի Եկեղեցու պատմությունը հիշում է այն բազմաթիվ հալածանքներն ու ողբերգությունները, որոնք ամրացրեցին Իր հոտի հավատքն ու քաջությունը: Մյուս Եկեղեցիների հետ հավասարապես Հայ Եկեղեցին ևս, Աստուծո Խոսքի համար խստագույն հալածանքներ կրելով հեթանոսական աշխարհից, քարոզիչների խիզախության և մարտիրոսների արյամբ հառնեց Սուրբ Հոգու ուժականության մեջ:

Մենք հիշատակում ենք Մեծ Հայքի առաջին Հայրապետ Ս. Գրիգոր Լուսավորչի հոգևոր սխրանքները, ում շնորհիվ նախկին քրիստոնեահալած հայոց Տրդատ Գ արքան ոչ միայն ինքը դարձավ Քրիստոսի հավատքին, այլև քրիստոնյա հռչակեց ամբողջ Հայկական պետությունը:

Հանրահայտ փաստ է, որ Հայաստանի քրիստոնեության պետական կրոն հռչակումը ավելի վաղ է, քան առաքելահավասար սուրբ Կոնստանտին կայսեր, կողմից Հռոմեական Կայսրության քրիստոնեության պաշտոնական ընդունումը: Այդ պատմական դարաշրջանը մենք գնահատում ենք ոչ միայն քրիստոնեական հավատքի քարոզության ազատության, այլև Քրիստոսի Եկեղեցու անխախտ հիմքի վրա ժողովուրդների հոգևոր միության առումով: Սա պատմական վկայությունն է այն բանի, որ մարդիկ, իրենց սրտերը բացելով առաքյալների և նրանց հաջորդների քարոզությունների առջև, շատ շուտով հոգևոր առատ պտուղներ տվեցին Տիրոջը, կարողանալով պահպանել և բազմապատկել Սուրբ Հոգու շնորհ լուսավորության պարգևը՝ իրենց ստեղծագործական ներուժը ծառայեցնելով քրիստոնեական մշակույթի արարմանը:

Հայ եկեղեցական արվեստի հոբելյանական ցուցահանդեսը, նվիրված Հայաստանում քրիստոնեության պետական կրոն ընդունման 1700-ամյակին, կոչված է բացահայտելու Հայաստանի ազգային քրիստոնեական մշակույթին բնորոշ գծերը, որի համար մենք խորապես շնորհակալ ենք Ձերդ Սրբությանը, Մոսկվայի բնակիչներին այսպիսի եզակի հնարավորություն ընձեռելու համար՝ ծանոթանալու հայ վարպետների եկեղեցական արվեստի

սքանչելի ստեղծագործություններին: Մենք համոզված ենք, որ այս բնույթի մշակութային ձեռնարկները մեծ դրամագլուխ են ժողովուրդների մերձեցման, անհասկացողության և թշնամանքի հաղթահարման և սիրո ու վստահության հաստատման գործում:

Ռուս Ուղղափառ և Հայ Լուսավորչական եկեղեցիների հարաբերությունները մշտապես համակված են եղել եղբայրական փոխհասկացողության ոգով և բարեկամական կապերով: Մենք հուսով ենք, որ այդ կապերը պիտի ամրապնդվեն և ընդլայնվեն, որպեսզի մենք բոլորս աճենք «շնորհօք և գիտութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի» (Բ Պետր. Գ 18):

Ի սրտե Ձերդ Սրբությանը մաղթում ենք երկար տարիների օրհնյալ ծառայություն Մեծ Հայքի քրիստոնյա ժողովրդին, և թող Ամենազոր Տերը պահի ձեր ժողովրդին խաղաղության, բարգավաճության և բարեպաշտ կյանքի մեջ. Ամեն»:

Նորին Սրբություն Ալեքսիյ Բ Պատրիարքի ողջույնի ամենաջերմ արտահայտություններից հետո, պատասխան խոսքով հանդես եկավ Ամենայն Հայոց Հայրապետը.

«Ձերդ Սրբություն, սիրելյալ եղբայր ի Քրիստոս Պատրիարք Մոսկվայի և Համայն Ռուսիոց Ալեքսիյ Բ, սիրելի հոգևոր եղբայրներ, մեծարգո մշակույթի նախարարներ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական Դատարանի և 1700-ամյակի տոնակատարությունների պետական հանձնաժողովի նախագահ պրն. Գագիկ Հարությունյան և Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական Դատարանի նախագահ պարոն Բարկլայ, սիրելի քույրեր և եղբայրներ.

Այս անկրկնելի և անջնջելի պահին, ես իմ աղոթքն եմ հղում Աստծուն ասելով՝ Շնորհակալ եմ, ով Տեր, որ ինձ այսպիսի մի պատմակերտ իրադարձության արժանացրիր, որ ես, իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ռուս եկեղեցու հովվապետ իմ սիրեցյալ եղբայր Ալեքսիյ Բ-ի հետ, Մոսկվա քաղաքի այս նշանավոր Կրեմլի թանգարանում պիտի բացումը կատարեմ Քո եկեղեցու՝ Հայ եկեղեցու զավակների ձեռքի աշխատանքի գործ եղող գանձերի ցուցահանդեսի. «Փառք Քեզ, Աստուած, փառք Քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք Քեզ»:

Սիրելի եղբայր, մենք այսօր Հայ Եկեղեցու 1700-ամյակի տոնակատարությունների առաջին ձեռնարկն ենք իրագործում և սա համարում ենք մի տեսակ այդ մեծ հոբելյանի նախատոնակը: Միևնույն ժամանակ թող այս ցուցահանդեսը Մեր ընծան լինի Մոսկվայի հիմնադրության 850-ամյակի տոնակատարության: Այսպիսով կրկին ու կրկին անգամ հաստատում ենք այն իրողությունը, որ հավատքը, արվեստն ու մշակույթը աշխարհագրական և ժամանակային ոչ մի սահման չեն ճանաչում: Բացելով այս ցուցահանդեսը, մենք թևակոխում ենք նոր փուլ Հայ և Ռուս եկեղեցիների, պետությունների և ժողովուրդների բարի հարաբերությունների: Տրամաբանական էր 1700-ամյակի այս ձեռնարկը սկսել Մոսկվայից, որովհետև Հայաստանի և Ռուսաստանի միջև եղած հարաբերությունները վերջին երեք հարյուրամյակում մեծ դեր են ունեցել Հայաստանի պատմության և մշակույթի մեջ:

«ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՆՁԵՐԸ» ԱԼԲՈՄԻ ՇԱՊԻԿԸ

ՅՈՒՍԻՍՈՒՄ ԲԱՑՄԻՆԸ

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ԱՌՈՒՄՈՎ
ԱՐՑԱԽԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՀԻ ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ

ԵՐԿՈՒ ՀՈՎՎՈՒՊԵՏՏԸՐԸ ՑՈՒՑՈՒՄՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՑԵԼՈՒՄԻՆ ԱԿՈՒՄ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՑՈՒՄԻՑ ՀԵՏ�ո ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԵՍ ԿՈՒԲԱՆԻ ԲԱԿՈՒՄ

Մենք մեր ժողովրդի անունից ամենախորը զգացումներով շնորհակալություն ենք հայտնում Ձերդ Սրբությանը և Կրեմլի Թանգարանի տնօրենությանը՝ այս աքանչելի ընդառաջումի համար, Էջմիածնի տարեգրության մեջ պիտի արձանագրենք «Մոսկվայի և Կրեմլի օր Մայր Աթոռի պատմության մեջ»:

«Հայ Եկեղեցու գանձերը» ցուցահանդեսը խորհրդանիշն է մեր եղբայրության: Եվ այսօր մենք պատմությունը չէ, որ պիտի հիշենք, այլ գալիք տարիները պիտի հիշեն այս օրը, որ Կրեմլում ներկայացվել է Հայ Եկեղեցին: Մենք վկան ենք դառնում եղբայրական համագործակցության և փոխհարաբերության: Այս քայլով մենք լավագույն դասն ենք տալիս ներկա ապրող և գալիք սերունդներին:

Թող Աստված առավել սերտացնի մեր երկու Եկեղեցիների և պետությունների բարեկամական ավանդական կապերը Իր փառքի և մեր երկու ժողովուրդների բարիքի համար. Ամեն»:

Բացման ժապավենը կտրելուց հետո, երկու Հայրապետները շրջեցին թանգարանի դահլիճներով ու ևս մեկ անգամ դիտեցին և հիացան հայ եկեղեցական արվեստի գոհարներով, որոնք ուրվագծում են Հայ Եկեղեցու Ժ-ԺԹ դարերի պատմությունն ու մշակույթը: Ցուցափեղկերում բազմաթիվ ցուցանմուշների կողքին ներկայացված էին Հայ Եկեղեցու այնպիսի սրբություններ, ինչպիսիք էին Նոյան Տապանի մասունքը, Խոտակերաց Ս. Նշանի Փրկչական Խաչափայտի մասունքով մասնատուփը, (ԺԳ դար), Թադեոս Առաքյալի և Հակոբ Մծբնա Հայրապետի աջերը և այլն, որոնք հատկապես գրավել էին այցելուներին:

Այս ցուցահանդեսով նշանավորվեց Հայոց աշխարհի քրիստոնեության պետական կրոն ընդունման 1700-ամյակի տոնակատարությունների սկիզբն ու մուտքը: Սակայն Հայոց Հայրապետը Էջմիածնախոս այս ցուցահանդեսը ձոնեց նաև Մոսկվա քաղաքի 850-ամյակին, այս ծիրի մեջ կատարվելիք տոնակատարություններին, որպես առաջին ընծա Ռուս Ուղղափառ Եկեղեցուն և Պետությանը Հայ Եկեղեցու կողմից:

Սա առաջին իրադարձությունն էր, երբ հայ մարդու ներաշխարհի թռիչք Հայ Եկեղեցու գանձերը ներկայանում էին աշխարհին և իրենց աղաղակող լռությամբ վկայում 1700-ամյա քրիստոնեական կյանքի վավերականության մասին: Պատմության ընթացքում բազում անգամներ են ճանապարհորդել նրանք՝ անցնելով աքսորի, ավերի, տարագրության ոլորաններով, բազում անգամներ են փրկվել հրի ու սրի ճարակումներից: Եվ հայ մարդու հետ միս ու արյուն դարձած այս սրբության անոթները, իրենց մեջ խտացնելով ու կրելով նրա ցավի, տառապանքի, վշտի ու մորմոքի, բայց նաև չընկրկող ու հարություն առնող դիմագիծը, այսօր Ս. Էջմիածնի իրենց ապահով ու վերջնական կայանից դարձյալ դուրս են եկել ճանապարհորդելու, սակայն ոչ ընկճված և աքսորված, այլ հպարտությամբ ու հաղթանակած: Հայաստանի կանական վայրերից հայ գեղջուկից մինչև իշխանը փայփայումով փրկված և հատիկ առ հատիկ ի մի բերված մեր պատմության այդ լուռ վկաները խոսում են այսօր Մոսկվայի պետական թանգարանում և դեռ պիտի շարունակեն իրենց ճանապարհը դեպի աշխարհի այլ վայրեր:

Այս ցուցահանդեսը Հայ Եկեղեցու 1700-ամյակի տոնակատարու-

թյունների ծրագրի անդրանկածինն ու երախայրիքը լինելով. Գարեգին Վեհափառի հոգածությամբ և 1700-ամյակի տոնակատարության կազմակերպման եկեղեցական և պետական հանձնախմբերի միասնական նախաձեռնությամբ ու ՀՀ մշակույթի նախարարության գործուն մասնակցությամբ առավել արժանորվեց եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) ինքնատիպ գունապարդ ալբոմի հրատարակումով՝ «Հայ Եկեղեցու Գանձերը» վերտառությամբ: Ալբոմը պարունակում է իր մեջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հավաքածուի այն բոլոր 79 ցուցանմուշները, որոնք տեղ են գտել «Մոսկվայի Կրեմլ» պետական թանգարանի ցուցադրանքում: Այն բացվում է Գարեգին Վեհափառի «Տասնըեօթ դարերի քրիստոնէական վկայութիւն՝ արուեստի և մշակոյթի միջոցով» խոսքով, որում Վեհափառ Հայրապետը շեշտում է այն իրողությունը, որ հայ մշակույթն ու արվեստը իրենց ամբողջության մեջ աքանչելի արտահայտությունն են հայ ժողովրդի քրիստոնեական կյանքի: Վեհափառ Հայրապետի խոսքին հաջորդում է ցուցանմուշները ընտրող Իվետա Մկրտչյանի և Սեյրանուշ Մանուկյանի «Ներածություն»-ը, որտեղ մանրամասն նկարագրված են ցուցահանդեսին ներկայացված բոլոր նմուշները: Ապա շուրջ 95 էջերի վրա, յուրաքանչյուր առարկայի համառոտագրություններով և բացատրություններով, պայծառ գունային պատկերներով, ներկայացված է ամբողջ հավաքածուն: Ալբոմը եզրափակված է ցուցանմուշների ռուսերեն հանգամանալից նկարագրությամբ:

Այս շքեղ ալբոմը հրատարակվել է Մոսկվայում, իսկ ծախսերը հոգացել է Արսեն Խանամիրյանը՝ հանգուցյալ Փոլ Կարապետյանի կտակից:

Մոսկովյան ցուցահանդեսը և նրա արգասիք ալբոմը մի գեղեցիկ առիթ է ոչ միայն հայ, այլև օտարազգի արվեստասերներին ներկայացնել մեր Եկեղեցու 1700-ամյա անցած ճանապարհը և այդ ճանապարհին ստեղծված հոգևոր մշակութային արժեքները: Եվ Վեհափառ Հայրապետի բնորոշմամբ «Թող այս ցուցահանդէսը բոլոր այցելուներին՝ հայ, ռուս և այլ ազգերի համար դառնայ հոգևոր վայելքի և վերացումի աղբիւր: Այն թող դառնայ սերտ համագործակցութեան ևս մէկ կապ Դաշնային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետութեան, Ռուս Ուղղափառ և Հայ Առաքելական եկեղեցիների, ինչպէս նաև բոլոր՝ Կաթոլիկ, Ուղղափառ և Աւետարանական եկեղեցիների միջև:

Թող երրորդ հազարամեակի սկզբնաւորումով Քրիստոնէական հաւատը մտնի ծաղկման մի նոր դարաշրջան»:

Հարկ է նշել, որ Մոսկվայի կանգվածային լրատվության միջոցները տնապես լուսաբանություններ էին տալիս Հայ Եկեղեցու և Կրեմլում բացված այդ եզակի ցուցահանդեսի վերաբերյալ:

Այստեղ ցանկանում ենք արձանագրել նաև մոսկովյան ցուցահանդեսի այցելուների բազմաթիվ ու բազմապիսի արձագանքներից ու ստացած տպավորություններից մի քանիսը.

«Հայ Եկեղեցու գանձերի ցուցահանդեսը շատ տպավորիչ է: Երբեք չեի տեսել նմանատիպ գեղեցկություն արարված մարդկային ձեռքերով. սպայական ուսումնարանի սան Նոսենկո»:

«Շատ շնորհակալություն. յատկապես հետաքրքիր էր տեսնել հայկական կրոնի կենդանի մասնիկները. Սաչա, 12 տարեկան»:

«Հիանալի ապգ, հիանալի արվեստ՝ ահա այսպես պիտի լինի միշտ և ամենուրեք: Այս հավաքածուն, որը ցնցեց մեր խմբին, հրաշալի է: Սուրբ մասունքները ցնցեցին մեզ մինչև մեր հոգու խորքերը, դրանք անգին են, արվեստի մեծագույն ստեղծագործություններ: Մշտապես մեր հիշողության մեջ կմնա այս օրը՝ այս կապը կյանքի և կրոնի միջև: Տա Աստված, որ այսպիսի հիասքանչ պահեր հաճախ լինեն: Շնորհակալություն Հայ Եկեղեցուն և ցուցահանդեսի կազմակերպիչներին. մի խումբ մոսկվացիներ»:

«Շնորհակալություն մեր Եկեղեցուն, որ մեզ հնարավորություն տվեց զգալու որպես հպարտ հայ քրիստոնյա. դպրոցականներ Լևոն և Միքայել»:

«Հայ Եկեղեցու գանձերը՝ գանձեր են, որոնք պատկանում են ոչ միայն հայ ապգին, այլև ամբողջ աշխարհի մարդկությանը: Այս ցուցահանդեսը յուրաքանչյուրիս հոգևոր հարստության աղբյուր է. մի խումբ դաղստանցիներ. Ք. Դերբենդ»:

«Ես կողմնակից եմ բոլոր խաղաղասեր ժողովուրդների բարեկամությանը, իրենց հավատքի և ավանդույթների պահպանությամբ հանդերձ: Թող օրհնի մեզ Երկնավոր Հայրը բարի գործեր կատարելու: Շնորհակալություն կազմակերպված ցուցահանդեսի համար, որի շնորհիվ ես կարծես թե միաձուլվեցի հայ ժողովրդի հետ: Թող միշտ երկինքը խաղաղ լինի հայ ժողովրդի վրա: Բելառուսիա, 1997»:

Ցուցահանդեսի բացմանը ներկա էին << Սահմանադրական դատարանի և Քրիստոնեության Պետական Կրոն հռչակման պետական հանձնախմբի նախագահ պրն. Գագիկ Հարությունյանը, Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արք. Պոլատյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգև եպս. Մարտիրոսյանը, Կանադայի թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը, 1700-ամյակի հանդիսությունների կենտրոնական գրասենյակի վարիչ-տնօրեն Մեսրոպ արք. Աշճյանը, հատուկ այս նպատակով Մոսկվա ժամանած ՀԲԸՄ ընդհանուր նախագահ Լուիզ-Սիմոն Մանուկյանը, կանադական երկրներից ժամանած սփյուռքահայ գործիչներ, Ռուսաստանի Դաշնությունում հավատարմագրված դեսպաններ, նախարարներ, արվեստի ականավոր գործիչներ:

Ավելացնենք, որ «Հայ Եկեղեցու գանձերը» ցուցահանդեսը պիտի տևի մինչև օգոստոս ամսվա վերջը, որի պատասխանատուներ են նշանակվել Մայր Աթոռի միաբան Ներսեհ աբդ. Խալաթյանը, Մայր Աթոռի պաշտոնյաներ Հովհաննես Թաքուկյանը և Անդրանիկ Անտոնյանը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ «ՄԵՏՐՈՊՈԼ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Կեսօրից հետո, ժամը 16.00-ին, Մոսկվայի շքեղ «Մետրոպոլ» հյուրանոցի մեծ սրահում Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմական խորհրդի կողմից կազմակերպվել էր մեծ ընդունելություն՝ ի պատիվ Գարեգին Ա և Ալեքսիյ Բ Հայրապետների:

ճաշկերույթին ներկա էին շուրջ 400 հոգիներ՝ պետական ներկայացուցիչներ, դիվանագետներ, մտավորականներ, մշակույթի գործիչներ և հայ համայնքի ներկայացուցիչներ:

ՀՈՒԼԻՍԻ 3, ՀԻՆԳՇԱԲԹԻ

Հուլիսի 3-ին, ժամը 12.30-ին, Վեհափառ Հայրապետն այցելեց կենտրոնական Օլիմպիյսկի պողոտայի և Տրիֆոնովսկայա փողոցի վրա գտնվող հայ եկեղեցու շինարարության համար Մոսկվայի քաղաքապետարանի կողմից հատկացված հողատարածք: Այստեղ, օրհնության աղոթք կատարելուց հետո, խոսք ուղղելով ներկաներին, Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ շատ շուտով այս տարածության մեջ պիտի վեր խոյանա մի հոյակերտ հայ եկեղեցի, որ մոսկվահայության թանձրացած աղոթքը կլինի՝ ուղղված Տիրոջը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Կեսօրից հետո, ժամը 14.30-ին, Վեհափառ Հայրապետը հանդիպեց Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմական խորհրդի անդամների հետ: Առաջնորդ Տիրան սրբազանը ներկայացրեց թեմական խորհրդի անդամներին, ապա խոսեց իրենց առջև ծառացած դժվարությունների և խնդիրների, ինչպես նաև կատարած և ապագայի համար ծրագրած աշխատանքների մասին: Ապա հատկապես նոր կառուցվելիք տաճարի համար տարվող աշխատանքների և ընդհանրապես մոսկվահայության կյանքն առավել աշխուժացնելու ծրագրերի մասին խոսեց թեմական խորհրդի նախագահ Վարդգես Արծրունին:

Աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու վերաբերյալ այնուհետև ներկաների հետ իր մտածումները և նկատառումները կիսեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ մասնավորաբար նոր տաճարի շինարարությունը պիտի նոր լիցք հաղորդի մոսկվահայության կյանքին և համախմբող դեր ունենա այս հատվածի հայության կյանքում:

Այնուհետև թեմական խորհրդի անդամների և Վեհափառ Հայրապետի միջև ծավալվեց աշխույժ երկխոսություն կանական և տարաբնույթ հարցերի վերաբերյալ, որոնք այսօր հիմնախնդիրներ են ոչ միայն Ռուսաստանի, այլև ամբողջ սփյուռքահայության համար:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

Նույն օրը, երեկոյան ժամը 20.00-ին, Գիտնականների Տանը Վեհափառ Հայրապետը հանդիպեց Մոսկվայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը Մոսկվայի հայ համայնքի անունից Նորին Սրբությանը բարիգալստյան և ողջույնի խոսք ուղղեց Տիրան սրբազանը, միևնույն ժամանակ շնորհակալություն հայտնելով Մոսկվայում բացված «Հայ Եկեղեցու գանձերը» ցուցահանդեսի համար, որ օտարներին պիտի պարզի հայոց քրիստոնեական դիմագիծը՝ կրկնապատկելով հայության հանդեպ առկա սերն ու հարգանքը: Ապա առաջնորդ սրբազանը հրավիրեց Վեհափառ Հայրապետին՝ իր հայրական պատգամն ուղղելու մոսկվաբնակ իր զավակներին.

«Սիրելի առաջնորդ սրբազան, հոգևոր եղբայրներ, հարգելի տնօրեն այս Գիտնականների Տան և սիրեցյալ, թանկագին, հայրենակից և ազգակից եղբայրներ և քույրեր:

Այս երկու օրերը հայության օրերն են Մոսկվա մայրաքաղաքում: Ես ի խորոց սրտի խոսք եմ բարձրացնում առ Աստված, փառք տալու Նրան, որ այսպիսի օրեր շնորհեց մեր ժողովրդին հռչակավոր Մոսկվա քաղաքում: Այս երկու օրերը եղան հայության ձայնատուր օրերը այս բազմաձայն ու մեծաձայն քաղաքում: Երեկ Կրեմլում, երբ ես Ռուս Ուղղափառ Եկեղեցու պետ իմ սիրեցյալ եղբայր Ալեքսիյ Բ Պատրիարքի հետ բացումը կատարեցի ցուցահանդեսի, խոսեց Հայաստանը, խոսեց Էջմիածինը, լցվեցի հուզումով, ասելով. «Ո՜վ Տեր, շնորհ արեցիր ինձ, որ ես այսօր գտնվեմ այնտեղ, որ եղել է բաբախուն սիրտը համայն Ռուսաստանի»: Այն եղել էր կենտրոնը Ռուսական Մեծ Կայսրության, որը վերջին 70 տարիներին փոխվել էր անաստվածության կենտրոնի: Բայց աշխարհը, կյանքը փոփոխությանց մի հարաճուն ընթացք է, այն զարգացում և կերպարանափոխություն է: Եվ երեկ Կրեմլը կերպարանափոխվեց, Ս. Էջմիածնի միջոցով Աստված իջավ Կրեմլում, և խոսեց հայի անմահ ստեղծարար և աննվաճելի ոգին: Ուունկի եմ գալիս Աստուծո առաջ, որ ես և ինձ հետ եղող իմ բոլոր հոգևոր եղբայրներն ու աշխարհական գործակիցները այնտեղ գտնվեցին և ականատես վկան եղան այդ մեծ դեպքի: Երեկ մի տեսակ Թաբոր լեռ էր, ուր Քրիստոսի ի Հայաստան իջած լույսը ճառագայթեց նաև Կրեմլում: Եվ մենք այդ լույսով այցելվեցինք ու պայծառացանք:

Առաջին անգամն է սա, որ Մենք ստանձնեցինք պատասխանատվությունը, որ Սուրբ Էջմիածնի գանձերը՝ մեր Հայրերի հոգու ճառագայթում, խոսնակ եղող արվեստը, չմնան միայն Էջմիածնի պատերի մեջ, այլ հասնեն ժողովրդին և ժողովուրդն հաղորդվի այդ արժեքներին մարդկային և ազգային վերանորոգության ուժով: Արվեստի հետ հաղորդվելը նշանակում է հաղորդվել Աստուծո հետ, որովհետև արվեստը ծնվել է կրոնի միջից: Արվեստը հոգու հաղթանակն է նյութի վրա: Ժայռից պոկված քարը մի սովորական քար է, բայց երբ այդ քարին մի քանդակագործ իր մտքի, սրտի, զգացմունքների թելադրանքով, զորությամբ ձև ու պատկեր է տալիս, այն դադարում է այլևս քար լինելուց: Վերածնդյան մեծագույն դեմքերից Միքելանջելոն Մովսեսի հռչակավոր արձանը քանդակել-ավարտելուց հետո, մի փայտով հարվածում է արձանին՝ ասելով. «Խոսի՛ր Մովսես»: Եվ այդ արձանացյալ Մովսեսը խոսում է մինչև այսօր: Եվ երեկ Կրեմլի ցուցահանդեսը ասաց ամբողջ ժողովրդին. «Խոսի՛ր Հայաստան, խոսի՛ր Էջմիածին»: Եվ խոսեցին: Լսեցինք մենք բոլորս այդ խոսքը, հոգով հրճվեցինք ու հարստացանք, տեսնելով հոգու հաղթանակը նյութի վրա: Հայոց արվեստը մեր հոգու ճառագայթումն է, և ով կկտրվի այդ ստեղծագործությունից, նրանից շատ բան կպակասի մարդ և հայ լինելուց:

Այդ իմաստով ես ողջունում եմ Մոսկվայում մեր առաջին ցուցահանդեսը Հայց. Եկեղեցու պաշտոնական հիմնադրության կամ քրիստոնեության որպես պետական կրոն ճանաչման 1700-ամյակի առիթով: Սա մեծ շնորհ է մեզ Աստուծո կողմից: Մենք 1988 թվականին իմ երջանկահիշատակ նախորդի հետ այս նույն Մոսկվայում նշեցինք Ռուս Եկեղեցու պաշտոնական հիմնադրության 1000-ամյակը և սպասում եմ այն օրվան, որ

նրանք էլ մեզ հետ կառնեն մեր եկեղեցու 1700-ամյակը: Այսօր ես անհունորեն ուրախ եմ, որ այս տոնակատարությունը Հայաստանից դուրս առաջին վայրում, որ պաշտոնապես սկսում է, Մոսկվան է:

Սիրելիներ, ես այստեղ ուզում եմ ձեզ հետ մի քանի խորհրդածություններ բաժանել. Ի՞նչ ենք հասկանում պատմություն ասելով և ի՞նչ է նշանակում գիտենալ այդ պատմությունը: Հետադարձ նայվածք նետելով մեր 1700-ամյա պատմությանը կարող ենք խոսել շատ կարևոր դեպքերի և դեմքերի մասին: Բայց դա որևէ մեկը կարող է իմանալ՝ բացելով հանրագիտարանը: Ծանոթությունն ուրիշ է, հաղորդությունը՝ ուրիշ, այսինքն ներթափանցվել նրանց հոգով: Պատմությունը միայն հինը չէ, այլ նաև անցյալի այսօր մեր մեջ ապրող իրականությունը: Ես առանց պատմության չէի կարող լինել այն, ինչ որ եմ այսօր: Այս պատմական ընթացքը մեզ կյանքի ճշմարտությունն ու արժեքը սովորեցնող մեծագույն ուժն է: Ան-դասագիրք ան-դրասեղան մի դպրոց է սա, որտեղ խոսում են մեր հայրերը: Մենք փոխվում ենք մեր մշակույթով: 1700-ամյակը պատմական հիշեցում չէ միայն, այլ մեր նոր կյանքի վերստեղծումը: Ներշնչում անցյալի արժեքներով ներկայի գործունեությամբ և ապագայի տեսիլքով: Պատմությամբ այս երեք ժամանակները իրար են միանում: Երկու վերաբերմունք կա պատմության նկատմամբ՝ կա՛մ պատմությունը հիշել և գոհանալ և կա՛մ պատմությունը հիշել ու նոր պատմություն կերտել: Երեկ Կրեմլում մի նոր էջ բացվեց մեր պատմության մեջ՝ մենք այնտեղ պատմությունը միայն չհիշեցինք, այնտեղ եղած արվեստի գործերը մենք չարձանագրեցինք միայն պատմության համար մեր ուղեղների ու մտքերի մեջ: Նրանցով մենք նորոգվեցինք, նորոգվելու ենք: Եվ ես կոչ եմ անում մեր ամբողջ մոսկվահայությանը, որ առաջիկա երկու ամիսների ընթացքում կարողանան արժեցնել այս ցուցահանդեսը: Այցելեք և ձեզ հետ տարեք ձեր երեխաներին ու ասեք, որ այս բոլորը մի հայելի է, որի մեջ դուք ձեզ տեսեք և մտածեցեք, թե ի՞նչ կարող եք ավելացնել այս ամենի վրա, ինչպե՞ս կարող եք հարստացնել ձեր հայրերի թողած ժառանգը: Այս ցուցահանդեսը թող լինի հուշարար այսօրվա և գալիքի լինելության:

Սա մեր եկեղեցու և մեր Հայաստանի անկախ պետության միացյալ գործն է: Եկեղեցի և պետություն երբ միացյալ ձեռքերով են գործել, միմյանց ուժ են տվել: Այս է, որ մենք պիտի հասկանանք և ճշմարտությունը միայն անցյալի մեջ չամփոփենք, այլ մեր ներկայի գործունեությամբ արժեցնենք: Ցանկանում եմ անդրադառնալ նաև այն իրողությանը, որ մենք, պատմությունն այսպես արժևորելով ներկայի համար և ապագայի տեսիլքով դադարենք ջարդի ու կոտորածի մասին խոսելուց, այլ զգանք, որ մենք նոր ժողովուրդ ենք, նորացյալ ժողովուրդ ենք և այդ բոլոր տանջանքների ու ավերակումների միջից հարություն ենք առել: Մենք այսօր ապրող ժողովուրդ ենք մեր անկախ Հանրապետությամբ: Եվ իբրև նոր ժողովուրդ պետք է նայենք մեր նոր կյանքին և ոչ թե ավաղենք անցյալը և ներկայի մեր անգործությունը անցյալին վերագրենք: Պատմությունը մեզ համար բանտ չպետք է լինի: Եվ մեր նոր կյանքը իր մեջ համակարգող ու բոլորին իմաստ տվողը մեր անկախ Հայրենիքով արտահայտվող իրականությունն է այսօր: Ցուրաքանչյուրս, ով էլ որ լինի, պարտավոր ենք մեր քրտինքից մի կաթիլ խառնել Հայաստանի և Արցախի վերածնության գործին: Այս է մեր ըմբռնումը, և ես ուզում եմ, որ մենք կարողանանք ա՛յս գիտակցությամբ

նայել մեր նոր կյանքին, և մեր եկեղեցու 1700-ամյակը դառնա վերարթնության և վերականգնումի շարժում: Մենք ուրիշ ուժ չունենք այսօր, բացի ամբողջական, միասնական Հայության գաղափարը և այդ գաղափարի զորությամբ օժտված և իրականացած կյանքը: Ոմանք քարյուղ և տնտեսական այլ միջոցներ ունեն և դրանով են խոսում, իսկ մենք՝ Հայերս, մշակույթ, արվեստ ունենք և դրանով ենք խոսում: Եվ դա է, որ մեզ պիտի մեծացնի՝ ազգի Հայրենիքի այդ մշակութասեր քաղաքակրթական առաջնորդությունն է, որ մեր արժեքը պիտի բարձրացնի:

Հետևաբար ես մաղթում եմ, որ Աստված ձեզ այս ոգիի մեջ պահի, առավել ուժ տալով ձեզ գործելու և ապրելու Մոսկվա այս մայրաքաղաքում որպես ամբողջական Հայ և քրիստոնյա: Թող Աստված այս ցուցահանդեսը դարձնի Հայության դիմագծի իրական ներկայացումը իր փառքի և մեր ժողովրդի պատվի և ընդհանրապես ժողովուրդների եղբայրության և սիրո ամրացման համար. Ամեն:»

Վեհափառ Հայրապետի խոսքից հետո ևս մեկ անգամ շնորհակալության և երախտիքի խոսք ասաց առաջնորդ Տիրան սրբազանը, ապա Նորին Սրբությունը «Պահպանիչ» աղոթքով ավարտեց այս նշանակալից երեկոն:

Հանդիպմանը հաջորդեց Նորին Սրբության հարցազրույցը Մոսկվայի հեռուստատեսության «Օրթոդոքսիա» հեռուստածրագրի թղթակցի հետ: Մասնավոր հարցումներ տրվեցին երկու Եկեղեցիների դավանաբանական տարբերությունների, քրիստոնեաբանական հարցերի և ընդհանրապես քույր Եկեղեցիների հարաբերությունների զարգացման մասին: Վեհափառ Հայրապետը շատ կրոնագիտական և դիպուկ պարզաբանումներ կատարեց վերոնշյալ հարցերի վերաբերյալ, ընդգծելով Հայ Եկեղեցու մոտեցումները այս խնդիրներին:

ՀՈՒԼԻՍ 4. ՈՒՐԲԱԹ

Հուլիսի 4-ը Վեհափառ Հայրապետի Մոսկվա այցելության վերջին օրն էր: Առավոտյան ժամը 11.00-ին Նորին Սրբությունը այցելեց Մոսկվայի հայկական Սուրբ Հարություն եկեղեցի: Այստեղ պաշտվեց գիշերային ժամերգության կարգը, որից հետո Տիրան սրբազանը Մոսկվայի հայության անունից ևս մեկ անգամ շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին այս աննախադեպ ցուցահանդեսի բացման և կազմակերպման համար, որը պիտի պատիվ բերի ողջ հայությանը. «Մոսկվացիները պիտի հասկանան, որ հայերը միայն առևտրի կամ պատերազմիկ ժողովուրդ չեն, այլ նաև հարուստ մշակույթ ունեցող և արվեստով ապրող Աստվածապաշտ ժողովուրդ»: Ապա սրբազան հայրը բարի ճանապարհ մաղթեց Նորին Սրբությանը՝ ցանկանալով, որ Վեհափառ Հայապետը նոր ուժով և եռանդով կարողանա իրագործել իր բոլոր ծրագրերը:

Այնուհետև Հայոց Հայրապետը իր հայրական խոսքն ուղղեց ներկա բազմությանը՝ շեշտելով ներկայով ապրելու, ներկայում գործելու և կյանքով վկայելու հավատարմությունը հանդեպ Աստուծո, ժողովրդին և Հայրենիքին.

«Մոսկվայում բացված այս ցուցահանդեսը լավագույն ցուցադրումն է

հայկական քրիստոնեական ոգու: Մենք տերն ենք այդ անգնահատելի հսկայական ժառանգության, հետևաբար արժանի ժառանգորդը լինելով մեր ինքնության մասին վկայող արվեստի այս սքանչելի գործերի, դրանք ներկայում դրամագլուխ դարձնենք ապագայի նոր կյանքը կերտելու, նորոգությամբ ապրելու համար»,- եզրափակեց Հայոց Հայրապետը:

Ապա եկեղեցու մուտքին Վեհափառ Հայրապետը մտերմիկ զրույց ունեցավ հայ կավակների հետ, որոնք հնարավորություն ունեցան առավել մոտից շփվելու և ծանոթանալու Հայոց Հայրապետի հետ:

ՄՈՍԿՎԱՅԻ «ՎՆՈՒԿՈՎՈ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ

ՄԵԿՆՈՒՄ

Կեսօրից հետո, ժամը 14.30-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով ուղևորվեց դեպի Մոսկվայի «Վնուկովո» օդանավակայան: Այստեղ Հայոց Հայրապետին ճանապարհելու էր եկել Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիյ Բ-ն՝ Ռուս Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների հետ միասին: Օդանավակայանի պաշտոնական հյուրերի ընդունելության սրահում Գարեգին Վեհափառը և Ալեքսիյ Պատրիարքը երկխոսություն ունեցան և հավանություն հայտնեցին առավել աշխուժացնել հարաբերությունները երկու Եկեղեցիների միջև թե՛ էկումենիկ շարժման, թե՛ աստվածաբանական երկխոսությունների և թե՛ աշխարհը հուզող հոգևոր-բարոյական հարցերի մարզերում:

Վերջում Հայոց Հայրապետը շնորհակալություն հայտնեց Ալեքսիյ Պատրիարքին այսքան ջերմ ընդունելության և «Հայ Եկեղեցու գանձեր» ցուցահանդեսը անձամբ հովանավորելու համար:

Իր հերթին Ալեքսիյ Պատրիարքը շնորհակալություն հայտնեց Գարեգին Վեհափառին այս գեղեցիկ առիթի համար, որ Հայոց Հայրապետը ցուցահանդեսի բացումով ընծայեց մոսկվացիներին և ընդհանրապես ռուս ժողովրդին:

Հրաժեշտի ողջագուրանքից հետո Հայոց Հայրապետը վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Հուլիսի 4-ին, երեկոյան ժամը 17.00-ին, օդանավը վայէջք կատարեց «Զվարթնոց» օդանավակայանում, ուր Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորեցին Մայր Աթոռի միաբանները, ինչպես նաև պաշտոնատար այլ անձինք: Բարձրաստիճան հյուրերի սպասասրահում փոքրիկ հանգստից հետո, Նորին Սրբությունն առաջնորդվեց դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Զանգերի ղողանջներով և «Հրաշափառ»-ով մուտք գործելով Մայր Տաճար, Գարեգին Ա Կաթողիկոսը Իջման Սուրբ Սեղանի առջև իր գոհաբանական աղոթքն առաքեց առ Աստված, ապա հակիրճ խոսքով ներկաների հետ կիսեց իր տպավորությունները:

Վերջում Նորին Սրբությունը, թափորի ուղեկցությամբ, առաջնորդվեց դեպի Վեհարան:

Բ. Ա. Գ.